ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ, ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
պատմական գիտ. թեկնածուներ, ՀԱԻ

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՊԱՐՍՊԱՊԱՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2015 թ. հուլիսի 18-օգոստոսի 18-ը իրականացրել ենք մաքրման ու պեղման աշխատանքներ Ս. Հովհաննավանք մենաստանը շուրջանակի փակող պարսպապատի արեւմտյան հատվածում (ներքուստ եւ արտաքուստ)՝ խնդիր ունենալով հեռացնել տարիների ընթացքում կուտակված հողն ու վերանորոգչական աշխատանքների արդյունքում մնացած շինարարական աղբը: Աշխատանքներն իրականացվել են վանքի նվիրյալ բարերար Արտյուշա Սիմոնյանի հովանավորությամբ (աղ. 1, 2, 3):

Ձեռնարկված մաքրման աշխատանքներն ու պեղումները բացահայտեցին, որ պարսպապատն ընդգրկում է ժամանակագրական եւ պատմամշակութային տարբեր դարաշրջաններ՝ կրելով գործառական փոփոխություններ՝ կապված վանք-մենաստանի հոգեւոր, մշակութային ու կրթական գործունեության հետ:

«Հովհաննավանքը, - գրում է վաստակաշատ հայագետ Կ. Ղաֆադարյանը, - երեք կողմից շրջապատված է մեծ եւ ընդարձակ պարսպով, չորրորդ կողմից պարսպապատված է բնական պատնեշով՝ Քասախի լանջերով[9], որով հիացած՝ վանք այցելած Մորից Վագները (ԺԹ. դարի առաջին կես) հուշագրում է. «Վերին ապրիճանի գեղատեսիլ եւ սքանչելի պատկեր է բացվում, երբ Արագածի դարավանդից դիտում ես խորը կիրճը, որի միջով կտրում անցնում է Ապարան (Քասախ) գետը: Այդ ահագոռ տեղանքն ամենից լավ կարելի է դիտել Հովհաննավանք մենաստանից» (աղ. 4, նկ. 1)[10]:

«Հովհաննավանք գլուխգործոցը ԺԳ. դ. հայոց ճարտարապետության՝ իր մեծությունով, գավիթով, նրբակերտ քանդակներով եւ շինարարական ճարպիկ

---

[9] **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ 42:
[10] **Ե. Շահազիզ,** Աշտարակի պատմությունը, Երեւան, 1987, էջ 303:

ձեւակերպումներով[11], *գտնվում է պատմական Արագածոտն գավառում Կարբի գյուղից մեկ կմ հարավ-արեւելք՝ համանուն գյուղի մեջ»:*

Հեղինակներից շատերը այս վանք-մենաստանը տեղադրում են Կարբի գյուղի տարածքում՝ «մերձ ի Կարբի», նշանակում է՝ ներկայիս Հովհաննավանք գյուղն ավելի հին չէ, քան վանքը. այն կազմավորվել է ժամանակի ընթացքում՝ վանքի շրջակայքում, որից եւ ստացել է անունը:

Զաքարիա Սարկավագի վկայությամբ՝ 1616 թ. գյուղն արդեն գոյություն ուներ եւ կոչվում էր «վանքի գյուղ» կամ Հովհաննավանք. «Հայր Հովասափ ի բնիկ գեղջէ վանացս»:

Հովհաննավանքը ոչ միայն գործող եկեղեցիների համալիր է, այլեւ հայտնի մենաստան. *«Արդ ընդ Հովհանեաւ Սրբոյն Սրբոյ Կարապետիս գծագրեալ եղեւ այս քաղցրաճաշակ պատմութիւնս՝ ի մէջ բազմաբաւոն միանձնացեալ եղբայրութեանս, եւ տուաւ ի սոյն եղբայրանոցս սուրբ յիշատակ հոգւոյ իւրոյ...»*[12]:

Հովհաննավանքը կազմված է երկու եկեղեցիներից՝ միանավ բազիլիկ թաղածածկ շինությունից եւ մեծ եկեղեցուց, որն արեւմտյան կողմում ունի ընդարձակ ժամատուն-գավիթ: Ժամատան հյուսիսային կողմում՝ բազիլիկ եկեղեցու արեւմտյան պատին կից, կա մեկ այլ շինություն՝ բեկբեկված հյուսիսային պատով, հավանաբար, վանքի տապանատունը (աղ. 4, նկ. 1):

Ըստ ավանդության՝ բազիլիկ եկեղեցին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Թագավորի համագործակցությամբ, Դ. դարասկզբին՝ այնտեղ տեղադրելով Հովհաննես Մկրտչի մասունք-նշխարները, սրբագործելով սրբանվեր շինությունը:

Միանավ բազիլիկան, չնայած բազմիցս իրականացված նորոգումներին, անկասկած, վերաբերում է քրիստոնեական ճարտարապետության զարգացման առաջին փուլին՝ Դ. կամ Ե. դարերին՝ պահպանելով նախնականությունը ցուցադրող նախագծային առանձնահատուկ բնորոշիչները:

*«Հովհաննավանքի այս հնագույն բազիլիկան եւ նրա հատակագծային համաչափություններն ունեցող Շիրվանճուղի փաճարն ու Եղվարդի փոքր ավերակ եկեղեցին, - **նշում է Թ. Թորամանյանը**, - կառուցված են ամենաուշը Ե. դա-*

---

[11] **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երեւան, 1948, էջ 55:

[12] «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, հ. Գ., էջ 5-6:

ռու սկզբները, իսկ անկից որչափ առաջ կանգնված լինելը թերեւս հետզհետե պարզվի»[13]:

Հովհաննավանք մենաստան-համալիրի վերանորոգումներին ու կրած փոփոխություններին է անդրադարձել հայ արվեստի ու մշակույթի մեծ գիտակ Գարեգին Հովսեփյանը. *«Յովհաննավանքի ներկայ շինութիւնը, - **գրում է նա**, - ԺԳ. դարի ստեղծագործութիւն է, բայց նորա հիւսիսային կողմը կայ մի նաւանի եկեղեցի, որի մի քանի նշաններից պարզ է, թէ նա Է. դարից առաջ հիմնուած մի շէնք է՝ մեծ նորոգութեան ենթարկուած, բայց եւ հնագոյն մնացորդներով, որպիսին մուտքի կողասիներն են եւ ներսի պայտաձեւ կամարի մի մնացորդ, որ մեր հին եւ բազիլիկ եկեղեցիներին են յատուկ: Յովհաննավանքը յիշւում է 603-606 թթ. վաւերական եւ ժամանակակից թղթերի մէջ: Ապա, ուրեմն, խորին հնութեան հիմք ունի այն աւանդութիւնը, թէ նա շինուած է Լուսաւորչի ձեռքով, ուրեմն՝ Դ. դարի սկզբում»*[14]:

Բազիլիկայի հաջորդ եւ հիմնավոր վերանորոգությունը կատարվել է ԺԷ. դարի կեսերին, երբ Զաքարիա Վաղարշապատեցի վանահայրը հայոց ՌՃԱ. (1652) թվին, Նոր Ջուղայի հարուստների դրամական օժանդակությամբ, երկու տարում նորոգեց բոլոր եկեղեցիները, այդ թվում եւ Ս. Կարապետը. *«Այսպէս եւ Զաքարիա վարդապետն, որ էր ի գեղջէն Էջմիածնի. եւ էր նա առաջնորդ մեծափառ ուխտին Յոհաննավանաց... նորոգել զեկեղեցիսն եւ զտներն Յոհաննավանից, զի պարիսպն, որ շուրջանակի, նա էր միայն պիտանի, իսկ այլքն ամենեքեան անպիտան եւ յոռի եւ եկեղեցացն ամենեցուն տանին աւերեալ եւ քանդեալ. եւ Զաքարիա վարդապետն ժողովեաց բազում վարպետս՝ քարհատ եւ փայտատաշ, եւ դարբին եւ ձեռն ի գործ էարկ սկսաւ նորոգել զվանքն, նախ զտներն եւ սեղանատունս եւ զիցերն ամենայն շինեալ աւարտեաց, եւ ապա զեկեղեցիսն եւ... ի ՌՃԱ. թուին զերծանի ի գործոյ»*[15]:

Սակայն Ս. Կարապետ եկեղեցին երկար ժամանակ անխաթար չմնաց: 1679 թ. ավերիչ երկրաշարժից այն դարձյալ խոնարհվեց. *«...եւ ի սուրբ ուխտն Յոհաննավանք փլան ամենայն գեղեցիկ ապարանքն եւ եկեղեցին խախտեցաւ եւ մեք հազիւ զերծաք ի մահուանէ», - **մեծ վշտով ու տրտմությամբ արձագանքում է Զաքարիա Սարկավագը***[16]:

Վերանորոգում կատարվել է նաեւ հետագա տարիներին: Ս. Կարապետի ճարտարապետական հորինվածքը պարզ է, զերծ զարդաքանդա-

---

[13] **Թ. Թորամանյան,** նշվ. աշխ., էջ 131:

[14] **Գ. Յովսէփեան,** Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պր. Գ., Նիւ Յորք, 1944, էջ 20:

[15] «Պատմութիւն Առաքէլ վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1881, էջ 268:

[16] «Զաքարեայ Սարկաւագի...», հ. Բ., էջ 104:



Աղ. 1. Հովհաննավանք մենաստանի (ԺԳ. դ.) գլխավոր հատակագիծը, ճարտարապետ՝ Հ. Խ. Խալփախչյան։



ՊԱՏ-1 Մ 1:100

ՊԱՏ-2 1:100



ԿՏՐՎԱԾՔ 2-2

Աղ. 2. Վանք մենաստանի, Արեւմտյան պարսպապատի հյուսասային հատվածը պեղումների ավարտին: Չափագրությունը ճարտարապետ Մ. Դանիելյանի:



Աղ. 3. Վանք մենաստանի հատակագիծը, ճարտարապետներ Լ. Սադոյան, Գր. Քոչոյան:

կային հարդարատարրերից՝ բացառյալ ԺԹ. դարի երկրորդ կեսի որմնանկարները:

Բազիլիկան, ի պատիվ Հովհաննես Մկրտչի նշխարք-մասունքների, կոչվել է Ս. Կարապետ:

Կաթողիկե եկեղեցին ներքուստ խաչաձեւ է՝ չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով, արտաքուստ՝ ուղղանկյուն քառանկյուն: Եկեղեցին կառուցվել է, համաձայն հյուսիսարեւելյան ավանդատան արեւմտյան ճակատի արձանագրության, ՌԿԵ.՝ 1216 թ.: Զաքարիա Սարկավագը մեծ եկեղեցու կառուցումը ավարտված է համարում հայոց ՌԿԶ. (1217) թվին. Կ. Ղաֆադարյանը առարկում է՝ կարծիք հայտնելով, թե մեկ տարում նման գեղակերտ շինության կառուցումը բացառվում է՝ չեշտելով, որ Զաքարիան, հավանաբար, ուղեցույց է ունեցել տաճարի հյուսիսային պատի՝ Վաչեի եւ Մամախաթունի արձանագրությունը: Արձանագրությունը վերաբերում է շինարարությանը, նրանց բարերարությանն ու աջակցությանը, բայց ոչ ավարտին[17]*:*

«Ի տաճարին անդ՝ ի կողմն հիւսիսոյ. «ՌԿԶ. (1217). Եմ՝ Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի Վաչուտեանց... միաբանեցաւ հանդերձ զուգակցաւ իմով Մամախաթունաւ սուրբ ուխտիս վանացս Յոհաննու, բազում տրօք եւ ընծայիւք օգնական եղաք ի շինութեան մեծապատառ նորակերտիս»[18]*:*

Կ. Ղաֆադարյանը կառուցման ավարտը համարում է 1221 թ.՝ համաձայն 34-րդ արձանագրության («Կաթողիկէ եկեղեցու ամ մուտքի ճակատի կամարի վրայ. ՀՈՀ., Մ. 1221»). «Կամաւ բարերարին Այ եւ յիշխանութենէ մեծին Շահանշահի, որդւոյ Զաքարեայի, եւ ի կողմնակալութենէ մերոյ նահանգի ամիր Քրդին, որդւոյ Վաչէի, ՈՀ. թուի, ես Ածատուր վարդապետս կամակցութեամբ միաբան եղբարցս եւ որդիացելովն իմ Յակոբոս վարդապետիս աշխատեցաք ի շինուած հրաշազարդ Կաթողիկէիս». այսինքն՝ Կաթողիկե եկեղեցու կառուցումը տեւել է վեց տարի՝ 1216-1221 թթ.:

Կաթողիկեն շինության օրվանից մինչեւ 1652 թ. նորոգման չի ենթարկվել: 1652 թ. վանքի առաջնորդ Զաքարիա Վաղարշապատեցին, հավանաբար, կատարել է վերանորոգչական որոշ աշխատանքներ: Ուժգին երկրաշարժից եկեղեցին թեեւ չի փլվել, սակայն գմբեթին առաջացել են ճաքեր, որոնք վերանորոգվել են Սարգիս Կարբեցի առաջնորդի օրոք: Նորոգվել է գմբեթը, եւ ստորին շարերի վրա վեղար է տեղադրվել:

---

[17] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., արձ. 15, էջ 7ա:

[18] **Յովհ. եպս. Շահխաթունեանց,** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 2014, էջ 272:

Տաճարն այդպես պահպանվել է մինչեւ 1918 թ., երբ խոնարհվել է ավերիչ երկրաշարժից: Եկեղեցին լիովին վերանորոգվել է անցյալ դարի 90-ական թվականներին՝ ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի կողմից:

Թեեւ ակնառու են որոշակի խախտումներ, այդուհանդերձ, կատարվել է շինարարական կարեւոր գործ, եւ այսօր մեր առջեւ կանգնած է մի հրաշագեղ կոթող-շինություն՝ ոսկեձեռիկ կերտողների ստեղծագործ մտքի փայլատակումների նշան:

Եկեղեցու հարուստ եւ ճոխ հարդարանքում առանձնակի ուշադրության է արժանի մուտքի ճակատակալի քանդակը՝ «Իմաստուն եւ հիմար կույսերի» պատկերագրումը (Մատթեոսի Ավետարանի Իե.): Քանդակազարդի կենտրոնում Քրիստոս է՝ գլխին լուսապսակ, աջ կողմում իմաստուն կույսերն են, ձախում՝ հիմարները: Պատկերաքանդակում առկա է բովանդակային շեղում, որը, կարելի է ասել, տեղի մտածողության դրսեւորում է՝ զուտ հայկական մեկնություն: Կույսերի փոխարեն (ըստ ընդունված պատկերագրության եւ առակի բովանդակության) նորամորուս երիտասարդներ են՝ մաքուր եւ անբիծ, աշխարհիկ կյանքը լքած ու հոգեւորին նվիրված, մենաստանի պատերին ապավինած ճգնավորներ (աղ. 9, նկ. 1):

«Կույս» բառը չունի սեռը շեշտող տարբերակիչ բովանդակություն. այն հավասարապես վերաբերում է թե՛ կանանց եւ թե՛ տղամարդկանց: Նման մեկ այլ օրինակ հանդիպում է ՄՄ պահվող Հ^{մլ} 4818 Վասպուրականից հայտնի ձեռագրում (1316)[19]*:*

Ժամատուն-գավիթ. ԺԳ. դ. հայ կոթողային ճարտարապետությանը բնորոշ կառույց է. կենտրոնում մեծ դահլիճն է, չորս սյուների վրա նստած բութ գմբեթը, բոլորշի լուսանցքը: Գմբեթի գլխին՝ 12 սյուների վրա զանգակատունն է: Ժամատան չորս սյուները պատերին միանում են որմնասյուների վրայով սլացող բարձրաթռիչք կամարներով:

Կամարների շնորհիվ ժամատան առաստաղը բաժանված է ինը միջկամարային հատվածների՝ զարդարված շքեղապատկեր հարդարատարրերով: Ժամատունն ունի լուսամուտների կանոնավոր համակարգ, որն ապահովում է լուսավոր միջավայր՝ ձեւավորելով լույսի ու ստվերի ներդաշնակ խաղ:

Ժամատուն-գավիթը, ըստ տիրող կարծիքի, կառուցել է Վաչեի որդի Քուրդ իշխանը: Շինարարությունն սկսվել է հայոց 699 թ., ավարտվել 700-ին, այսինքն՝ 1251 թ.:

[19] **Л. Закарян,** Об одном рельефе Ованнаванка, ИФЖ, N. 1, 1973, с. 294.

Այս կարծիքը չի ընդունում Կ. Ղաֆադարյանը: Նա նշում է, որ Քուրդ իշխանի՝ 1250 թ. արձանագրությունը ոչինչ չի ասում շինարարության սկզբի մասին: Իշխանը պարզապես կամեցել է տեղեկացնել, որ ինքն ու կինն են նախաձեռնել շինարարությունը, եւ իրենք էլ ավարտել են այն: Կ. Ղաֆադարյանը կարծում է, թե արձանագրության 1250 թ. պետք է համարել շինարարության ավարտը ցուցող, քանզի այն տեւել է 3-4 տարի՝ սկսած 1247 կամ 1248 թ.[20]*:*

Գավիթ-ժամատունն աչքի է ընկնում ներքին հարուստ հարդարանքով՝ քանդակազարդ խաչքարեր, որմնանկարներ, նրբագեղ բուսական եւ երկրաչափական ժանյակահյուս զարդաձեւեր՝ արտահայտիչ ու տպավորիչ, կատարյալ՝ հորինվածքում եւ հնարամիտ կերտվածքի արտահայտչամիջոցներում:

Հարդարանքում աչքի է զարնում առաստաղի սալաքարերից մեկը՝ Քրիստոսի քանդակագիր դիմապատկերով՝ ինքնատիպ ու եզակի՝ վանքի զարդապատկերային համակարգում: Դիմապատկերը հարազատ է պատկերագրական բյուզանդական մշակումներին՝ գլխաբաց, մորուքավոր (զուգահեռ գծիկներով), վայելուչ ու մեծաչք, տարբեր գոթական պատկերումներից[21]*:*

Կարծում ենք՝ Քրիստոսի դիմապատկերը կերպավորմամբ ոչ միայն հարազատ է Սուրբ վարշամակին, այլեւ կերտվել է հայկական միջավայրում՝ հայ քանդակագործի կողմից, որը, թերեւս, ծանոթ է եղել «Եդեսիոյ դիմապատկերին»: Ըստ Մովսես Խորենացու Պատմության՝ Սուրբ վարշամակը, որը կոչվել է նաեւ «Սուրբ դեմք»[22]*, Եդեսիա է բերել Հայոց Աբգար Թագավորի սուրհանդակ Անանը. «Թուղթ եբէր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում եւ զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ Եդեսացւոց քաղաքին մինչեւ զայսօր ժամանակի...»*[23]*. Եդեսիան կիսով չափ հայկական քաղաք էր, «Աբգարը՝ արքայ Հայոց» (աղ. 4, նկ. 2)*[24]*:*

Գավիթ-ժամատունը միաժամանակ ծառայել է որպես տապանատուն-հանգստարան, ուր ամփոփվել են բարձրաստիճան հոգեւորականների եւ վանքի առաջնորդների, իշխանների ու իշխանական ընտանիքի

---

[20] **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 39:

[21] **Անջելո Սերրատի**, Ինչպիսին է Քրիստոսի դեմքը. Քնական հայացք պատմությանը, Երեւան, 1992, էջ 4:

[22] Անդ, էջ 7:

[23] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, բնագ. եւ ներած.՝ Մ. Աբեղյանի եւ Ս. Հարությունյանի, 1913, գլ. ՀԲ.:

[24] Անդ, գլ. ԼԳ. **Անջելո Սերրատի**, նշվ. աշխ., էջ 4:

անդամների աճյունները. «Ինքը՝ Քուրտ իշխանը, - գրում է Զաքարիա Սարկավագը, - թողնելով աշխարհիկ փառքը՝ հետեւեց անանց փառքին: Գնաց Սեւանա կղզի, միայնակյացի զգեստ հագավ, կրոնավոր դարձավ եւ վախճանվեց այնտեղ ու կենդանացավ Քրիստոսով, թաղվեց եկեղեցու գավթում, որ Սուրբ Կարապետի անունով էր... Նրա հիշատակը թող օրհնությամբ լինի»[25]*:*

Ժամատուն-գավիթը նշանակալի նորոգումների չի ենթարկվել՝ բացառությամբ ծածկի սալերի ու երեսապատ քարերի փոփոխման:

1938 թ. կատարվել են նորոգումներ Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից: Փոխվել են արեւմտյան ճակատի երեսապատ քարերի մի մասը, մեծ լուսամուտի ճակատը, ժամատան ծածկը՝ փոխարինվելով կղմինդրածածկով:

Հովհաննավանքը պատմական աղբյուրներում եւ վիմագիր արձանագրություններում հիշատակվում է մի շարք անուններով: Արձանագրություններում բազիլիկ եկեղեցին կոչվում է Ս. Կարապետ, թեեւ «Գիրք թղթոցում»[26] *եւ Ուխտանեսի Պատմության մեջ*[27] *վանքը անվանվում է «Յոհաննու».* «...գնայ մեծաւ փրփմութեամբ ի վանան՝ որ կոչէ Յոհաննա, որ է Արագածոտան...». *այս շրջանում միայն բազիլիկ եկեղեցին էր կանգուն: Մեծ եկեղեցին, որը հայտնի է նաեւ «Կաթողիկե» անվամբ, կոչվել է Ս. Կարապետ*[28]*: Զաքարեի եւ Իվանեի արձանագրության մեջ կարդում ենք՝* «...փուրք շնորհիւ տուաք ի Սուրբ Կարապետս՝ ի վանս Յոհաննու»:

Պարիսպներ. *Պարսպապատի կառուցման վերաբերյալ պահպանված արձանագրությունը ժամանակին գտնվել է վանական համալիրից հյուսիս՝ գերեզմանոցի խաչքարերից մեկի պատվանդանի վրա: Խաչքարը չի պահպանվել, սակայն կա Զաքարիա Սարկավագի վերծանությունը.* «Եւ՝ Նանայս՝ դուստր մեծ հազարապետին Սարգսի՝ որդւոյ Զաքարէի՝ որդւոյ աւագ Սարգսի, կանգնեցի ի վերայ նորակերտ վարդապետիս Մարգարէի (խաչ) եւ որ սկիզբն յաշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ եւ առաւել եղեւ քան զծնունդ յորովայնի, եւ հոգայր զօգուտն հոգւոյ իմոյ, եւ իմ տեսեալ սրտի նորա, անկայ ի շինութիւն պարսպին՝ նորա առաջնութեամբ եւ մինչ նա զիօժարութիւն բարւոյ

[25] **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմագրութիւն, թարգմ.՝ Վ. Առաքելյանի, Երեւան, 2013, էջ 218:
[26] «Գիրք թղթոց», գլ. ՀԵ., Երուսաղեմ, 1994, էջ 329:
[27] «Ուխտանէս եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց», 1871, Ս. Էջմիածին, գլ. Ը., էջ 21:
[28] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 44:

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Աղ. 4. Նկ. 1. Վանք մենաստանը, բազիլիկ եկեղեցին (Դ.-Ե. դդ.) եւ տապանատունը:
Նկ. 2. Պատկերակիր սալ (Քրիստոսի պատկերով) ժամատուն գավթի առաստաղին:
Նկ. 3. Գինու կարասներ գտնված բազիլիկ եկեղեցու արեւմտյան պատի տարածքում բացված հնձաններից (ԺԳ.-ԺԴ. դդ.)

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Աղ. 5. Նկ. 1. Պարսպապատի արեւմտյան հատվածը (ԺԲ.-ԺԳ. դդ.) պեղումներից առաջ:

Նկ. 2. Քանդակազարդ հարդարաքարեր բացված պեղումների միջոցին:

Նկ. 3, 4. Պարսպապատի հյուսիս-արեւմտյան հատվածը պեղումների ժամանակ եւ ավարտին:

Նկ. 1

Նկ. 2

Աղ. 6, Նկ. 1, 2. Պարսպապատի արեւմտյան հատվածում բացված խուցը:

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Աղ. 7, Նկ. 1, 3, 4, 5. Պարսպապատի հյուսիս-արեւմտյան հատվածում բացված խուցը եւ պահակատունը (կից պարսպապատի կենտրոնական մուտքին Աշտարակի տակ, ներքուստ) պեղումների ավարտին:

Նկ. 2. Բազիլիկ եկեղեցու արեւմտյան պատի տարածքը պեղումներից առաջ:

գործոյս վերակացութեան էր, մերձեցաւ կատարած կենաց նորա եւ ի հող էջ մանկահասակ»[29]*:*

Արձանագրությունը վկայում է, որ պարիսպը կառուցվել է կյուրիկյան վաղամեռիկ Աբաս թագավորի կնոջ՝ Նանայի, կամ, ըստ Սանահինի կամրջի արձանագրության, Վանենու միջոցներով[30]***: Կ. Կոստանյանցը***[31] ***արձանագրությունը թվագրում է 1187 թ., որը չի ընդունում անվանի վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը՝ առարկելով, թե արձանագրությունը չէր կարող գրված լինել 1187 թ., քանզի այդ ժամանակ Աբաս թագավորը ողջ էր, իսկ Նանան չէր կարող նրան չհիշատակել: Այստեղից եզրակացությունն՝ Աբաս թագավորը վախճանվել է 1192 թ.՝ Նանայի հետ ամուսնանալուց երկու տարի անց: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ պարսպի եւ կամրջի շինարարությունը Նանան սկսել է ամուսնու մահից հետո, հետեւաբար, պարիսպը կառուցվել է 1190-ական թվականներին կամ ԺԳ. դարասկզբին (աղ. 5, նկ. 1)***[32]***:***

Առաքել Դավրիժեցին վկայում է, որ Երեւանի մեծ երկրաշարժից (1679 թ.) պարիսպը բացարձակ չի տուժել. Զաքարիա վարդապետի (Վաղարշապատեցու) օրոք *«...պարիսպն, որ շուրջանակի, նա միայն էր պիտանի, իսկ այլքն ամենայն անպիտան եւ յոռի...»*[33]*:*

«Մեր կարծիքով, թեեւ պարապի բուրգերը եւ մուտքը ժամանակակից չեն պարապի մնացած մասին, բայց նրանք էլ շինված են ավելի վաղ, քան երկրաշարժը, հավանաբար, ԺԳ. դարում», - ***եզրակացնում է Կ. Ղաֆադարյանը***[34]***:***

Պարիսպը կառուցված է տեղական խորանարդաձեւ որձաքարերով. առավել բարվոք վիճակում են հարավային ու հյուսիսային պատերը: Եկեղեցիների վերանորոգման ժամանակ տնտեսական կառույցներին եւս մեծ ուշադրություն է դարձվել: Հիշատակարաններից մեկում կարդում ենք. *«Շինեաց ի մէջ հին պարապին պարապի հարաւոյ կողմն եկեղեցւոյ, զգնդեսապունն, զսեղանապունն, զիցերն...»*[35]*:*

Սեղանատունն անմիջականորեն պարսպին կից կառուցելու հանգամանքը ԺԷ. դարի հայ շինարարական մշակույթին բնորոշ երեւույթ էր,

---

[29] Անդ, էջ 42, արձ. 71. «Զաքարեայ Սարկաւագի...», էջ 113:

[30] **Ա. Орбели**, Надпись санаиского моста, “Христиаиский Восток”, т. IV, ч. II, Петроград, 1915.

[31] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 18:

[32] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 43:

[33] «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896 (ՌՅԽԵ.), գլ. ԻԶ., էջ 348:

[34] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 43:

[35] **Ղ. Ալիշան,** Ազդարար, Վենետիկ, 1890, էջ 173:

քանզի ԺԲ.-ԺԳ. դարերում դրանք կառուցվում էին առանձին՝ նախապես մշակված բարդ հատակագծերով (Հաղարծին, Սանահին, Հաղպատ եւ այլն):

Պեղումներով բացվեց կենտրոնական մուտքին կից ուղղությունը՝ հարավ-հյուսիս, աշտարակի հակառակ կողմում՝ փոքր չափերի սենյակ՝ ուղղանկյուն կտրվածքով, որձաքարերով շարված: Սենյակի ծածկը, անշուշտ, պահպանված չէր, այն թաղված էր հողի հոծ զանգվածի տակ: Սենյակն արեւելյան կողմում ուներ մուտք, որը հետագայում շարվել, գոցվել էր, հավանաբար, վանքը լքելու պահին, երբ դիտանոցի կարիքն արդեն չկար (աղ. 7, նկ. 3, 4, 5): Սենյակի հարավային կողմում՝ ուղղությունը արեւմուտք-արեւելք, պահպանված են քարե սանդուղքի աստիճաններից մի քանիսը՝ հղկված սալերի տեսքով: Սանդուղքով բարձրացել են տանիք-դիտակետ՝ ստուգելու տեղանքը: Սենյակի կենտրոնում օջախն էր՝ կավակերտ, փոքր չափերի: Կարծում ենք՝ նորաբաց սենյակը վերաբերում է նույն ժամանակաշրջանին, ինչ պարսպապատը, եւ ծառայել է իբրեւ պահակակետ՝ հսկելու վանքի անդորրը՝ անակնկալ հարձակումներից հնարավորին չափ պաշտպանվելու ակնկալիքով: Նման սենյակները՝ գլխավոր մուտքերին ու դիտանոց աշտարակ-բուրգերին կից, բնորոշ են հայկական միջնադարյան ամրոցներին ու վանական համալիրներից շատերին (Անի, Մաղասբերդ, Տիգնիս, Ամբերդ, Կու-կալեի բերդ (Սեյհուն գետի վրա), Անազարբա, Կոռիկոս եւ այլն):

Այդ շինության հյուսիսարեւմտյան կողմում, պարսպի խուլ պատերն ընդունելով իբրեւ հենապատ, ժամանակին կառուցվել է մի վանախուց, որի ներքին կառուցվածքային մանրամասները բացվեցին շինարարական աղբից ու թանձր հողակուտակումներից տարածքը մաքրելու ժամանակ (աղ. 5, նկ. 1, 3, 4, աղ. 6, նկ. 1, 2, աղ. 7, նկ. 1):

Եկեղեցուն պատկանող քիվերը, կիսագլան զարդերը, որմնաղեղները, ճակատակալ քարերն ու ճարտարապետական այլ բեկորներ, որոնք վերականգնողական աշխատանքների ժամանակ դուրս էին մնացել շինարարների ուշադրությունից, խմբավորված կարգով դասավորվեցին եկեղեցու հանդիպակաց հրապարակում (աղ. 5, նկ. 2, աղ. 9, նկ. 2):

Մաքրման աշխատանքների արդյունքում՝ պեղումներով աստիճանաբար բացված 10x7.3 քմ մակերեսով վանախցի արեւմտյան եւ հյուսիսային պատերին ներքին կենցաղային նշանակության տարբեր ձեւերի պատրհանները՝ քառանկյուն, ուղղանկյուն, խիտ շարքով հաջորդում էին միմյանց, իսկ պարսպապատի մեջ փորված կիսակլոր բուխարին ամ-

բողջացնում էր բնակելի բջջի ողջ համակարգը. ճարտարապետական-շինարարական նման հիմնակառուցվածքը ԺԷ.-ԺԸ. դդ. լայնորեն տարածված էր Սյունիքի ճարտարապետական համալիրներում (աղ. 8, նկ. 1)[36]:

1.3 մ լայնությամբ մուտքի առկայությունը պատի ծայր արեւելքում հուշեց 0.48x0.48 քառակուսի չափերի դռան սռնին:

Մուտքի նման տեղադրությունը եւս հիմնավորված է՝ տարածքն առավել նպատակային օգտագործելու հանգամանքով:

Վանախցի պատերը ժամանակին սվաղված են եղել կրաշաղախով, որի հետքերը պահպանված էին հարավարեւմտյան անկյունում: Հատակը սալապատված էր՝ 1.25, 0.4, 0.5, 0.8 մ չափերի անհամաչափ սալերով (որձաքար):

Վանախուցը, ամենայն հավանականությամբ, լուսավորվել է արեւելյան պատի պատուհաններով կամ երդիկով, որն առայժմ թեական է, քանզի արեւելյան պատը պահպանված չէ:

Ամեն դեպքում խցի լուսավորումը վերոնշյալ միջոցներով տրամաբանական է: Վանախցի չափերը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ խցում բնակվել են 2-3 հոգի: Վանախուցը արեւմտյան պարսպապատի մուտքի ձախ կողմում պեղված միակ բնակելի բջիջն է: Մուտքից հարավ-արեւմուտք՝ համալիրի պարագծով կառուցված խցերն ու տնտեսական շինությունները ծածկված են հողաշերտի եւ շինարարական աղբի զանգվածեղ կուտակումներով, որոնք սպասում են իրենց հետազոտողին:

Բացված վանախցի շարունակության վրա՝ պարսպապատի հյուսիսային թեւում, հավանաբար ԺԸ. դարում, վանքի (նաեւ գյուղի) ամայանալուց հետո ինչ-որ շինարարական աշխատանքների արդյունքում կառուցվել է կամարաշար մուտք, որը սեյսմիկ կայունության համար կրում էր գերանաշար հեծան: Ցավոք, մաքրման աշխատանքների ժամանակ այն փլուզվեց. պատճառը փտած գերաններն էին ու խարխլված քարաշարերը (որձաքար):

Միաժամանակ մաքրման աշխատանքներ եւ պեղումներ ձեռնարկեցինք բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատի շրջակայքում (արտաքուստ): Տարածքը ծածկված էր հողի եւ շինարարական մնացորդների կուտակումներով: Հողի շերտը հեռացնելիս, մոտ 1 մ խորության վրա, բացվեցին հնձանի հորեր: Նախորդ տարիներին եւս, հողային կուտա-

[36] **Մ. Հասրաթյան**, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երեւան, 1973, էջ 99:

կումները հեռացնելիս, անմիջապես պատի տակ բացվել են գինու խոշոր կարասներ: Դրանցից երկուսն այժմ ցուցադրվում են Կաթողիկե եկեղեցու կենտրոնական մուտքի երկու կողմերում: Կարասներն իրենց հորինվածքով վերաբերում են ԺԱ.-ԺԴ. դարերին եւ ունեն համադրելի զուգահեռներ Արտաշատում, Դվինում, Գառնիում, Պտղնիում: Դրանք վկայում են, որ վանքն ունեցել է հնձանների արտադրական համալիրներ, որոնք, ցավոք, այսօր պահպանված չեն (աղ. 4, նկ. 3):

Հնձաններ. *«Ընդունարան հնձոց, այսինքն՝ կթոց խաղողոյ. Գուր կամ աւազան, ուր խաղողն ճմի. հնծան: Ջեղցին հնձանք գինւոյ եւ իւղոյ...»*[37]*:*

Հնձանների գոյությունը վանքի տարածքում հաստատվում է Կաթողիկե եկեղեցու գավթի հարավային պատի վիմագրով. «Ի թուին ՀԻԸ. (1279 կամ 1280 թթ.) մեք՝ Վարդան վարդապետ եւ Միխիթարիչ, ծառայք Քրիստոսի, արարաք արդիւնս բազումս... փոյաք եկեղեցոյս զԿոնթեղուրն, որն էր հայրենիք Սուրբ Կարապետիս, շինեցաք հնձանս մեծածախս»[38]*:*

Բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատի հարեւանությամբ (արտաքուստ) բացված հնձանների հորերը թվով չորսն են՝ շինված խոշոր անմշակ քարերով, ծեփված կրաշաղախով, շերտի հաստությունը 2 սմ է (աղ. 7, նկ. 2, աղ. 8, նկ. 2, 3, 4, 5):

Հորերը գլանաձեւ են, խորը, բերանների ոչ լայն բացվածքով. չափերը՝ խորությունը 1.9-2.5 մ, բերանների տրամագիծը 35-45-56 սմ: Հորերից երկրորդի հատակին (համարակալումը պայմանական է) պահպանված է փոսորակ (15x15 սմ), ուր պետք է լցվեր, հավաքվեր քաղցուի տիղմը: Հորի բերանը փակած է անմշակ սալքարով (աղ. 9, նկ. 3, 4, 5):

Հայաստանում պեղված միջնադարյան (Ժ.-ԺԴ. դդ.) հնձանների բնորոշ տիպը բացվել է Գառնիում, ուր դրանց թիվը հասնում է մի քանի տասնյակի: Հնձաններից առավել դասականը կազմված է երկու բաժնից, որոնցից առաջինը արտադրական հատվածն է՝ բուն հնձանը՝ թեք հարթակ-առաջամասով: Հնձանի հատակը սվաղված է կրաշաղախի հաստ շերտով եւ ունի թեք մակարդակ, որպեսզի խաղողը ճզմելիս քաղցուն հոսեր դեպի հատակի ցածրադիր մասում փորված հորը, որը եւս պատված էր կրաշաղախով: Սվաղված էին նաեւ պատերը: Առաջինից դուռը տանում էր դեպի երկրորդ բաժին՝ զետեղարան: Զետեղարանում սովորաբար փորված էր լինում մեծ հոր, ուր հավաքվում էր քաղցուն՝ բուն

[37] «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Բ., Երեւան, 1981, էջ 108:

[38] **Կ. Կոստանյանց**, նշվ. աշխ., էջ 121, արձ. 406. 1. **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 73, արձ. 57:

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Աղ. 8, Նկ. 1. Նորաբաց խուցը պատրհանով եւ բուխարիկով պեղումների ավարտին:

Նկ. 2, 4, 5. Հնձանների հորեր բացված բազիլիկ եկեղեցու արեւմտյան պատի տակ:

Նկ. 3. Սանդ որձաքարե գտնված նույն հատվածում:

Նկ. 1

Նկ. 2



Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Աղ. 9, Նկ. 1. Պատկերաքանդակ (խելոք եւ հիմար կույսերի պատկերներով) կենտրոնական եկեղեցու շքամուտքի պարակալին:

Նկ. 2. Քանդակազարդ հարդարատար (որձաքար) գտնված պեղումների միջոցին շինարարական թափոնում:

Նկ. 3, 4, 5. Հնձանների հորեր բացված պեղումներով:

հնձանից հոսելով միջնորմի տակ թողնված կիսախողովակաձեւ անցքով: Ջետեղարան-մառանին կից երրորդ բաժինն էր, ուր դրվում էին կարասները՝ պատրաստի գինին պահելու համար[39]. «Կրեցին պտուղս հարիւրաւորս... լցան գուբք գինւոյ ի կութս այգեստանեաց...»[40]:

Հնձանները կարող էին ունենալ մի քանի հորեր, որոնք լինում էին տարբեր: Եթե արտադրական բաժնում հորն ուներ կիսաշրջանաձեւ փոսորակ՝ թեք հատակին՝ քաղցուի զտման համար, ապա երկրորդում հատակը լինում էր հարթ:

Նմանօրինակ համադրելի հնձաններ բացվել են Արուճում, Աշնակում, Գառնիում, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի շրջակայքում (Հյուսիսային կողմում) եւ այլուր: Դրանք թվագրվում են ԺԱ.-ԺԴ. դարերով: Կարծում ենք՝ նույն հորինվածքն են ունեցել նաեւ Հովհաննավանքի հնձանները՝ հիմնադրված ԺԳ. դարավերջին, փաստացի ապացույցը բացված հորերն են: Հորերի հարեւանությամբ բացվեցին եւ թաղումներ:

Մարդաբանական նյութն ուսումնասիրել է Անահիտ Խուդավերդյանը (Ованнаванк, Раскопки 2015), որի հաշվետվության հիմնական արդյունքները ներկայացնում ենք ստորեւ. «Հովհաննավանքից հայտնաբերված՝ ներկայացվող հնամարդաբանական հավաքածուն բաղկացած է անհատական ութ դիտարկումներից (4 տղամարդ, 2 կին, 2 երեխա): Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Հովհաննավանքի մարդաբանական նյութի չափագրական եւ նկարագրական (դիսկրետ) հատկանիշները բնորոշ են արմենոիդ տիպին: Ատամնաբանության համակարգի տարբերակը առավելագույն կերպով արտահայտում է հարավային գրացիլ տիպի արեւմտյան ենթատիպի տարրերը: Իր առանձնահատկություններով հնամարդաբանական նյութը միջանցիկ տեղ է գրավում Հայաստանի ուշ անտիկ դարաշրջանի եւ ժամանակակից հայերի միջեւ: Հովհաննավանքից հայտնաբերված գանգերի վրա առկա են արհեստական ձեւափոխումներ՝ երկարացում, որոնք առաջացել են գանգը սեղմելու միջոցով: Օղակաձեւ ձեւափոխումներ նկատվել են երկու տղամարդու գանգերի վրա: Նմանատիպ ձեւափոխումներով գանգեր հայտնի են Անդրկովկասի անտիկ եւ վաղ միջնադարյան մի շարք հուշարձաններից (Բենիամին, Շիրակավան, Կարմրաքար, Վարդբաղ, Բյուրական, Մինգեչաուր, Սամթավրո եւ այլն): Մարդաբանական նյութի ուսումնասիրու-

[39] **Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան,** Գառնի III, 1949-1956 թթ. (պեղումների արդյունքները, միջին դարեր), Երեւան, 1962, էջ 39:

[40] «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 199:

թյան արդյունքում վեր են հանվել մարդկանց վրա միջավայրի թողած հիմնական՝ ուղղակի եւ անուղղակի ազդեցությունները: Հովհաննավանքի բնակչության շրջանում հայտնաբերվել են նաեւ բազմաբնույթ ախտաբանական շեղումներ: Այսպես՝ գանգատուփերի մի մասի վրա առկա են վնասվածքների հետքեր (3 տղամարդ, 2 կին): Բացահայտվել է նաեւ գանգի բնածին անկանոնություն (plagiocephalia): 50-55 տարեկան կնոջ գանգի վրա նկատվել է գլխի երկկողմանի անհամաչափություն: Նման անկանոնություն հայտնաբերվել է նաեւ Դվինի, Բյուրակնի եւ Վարդբաղի նյութերում: Արձանագրվել է միջին ականջի կամ թմբկախոռոչի բորբոքում (mastoiditis. 1.5 տարեկան երեխա), պարոդոնտոզի հիվանդություն (գանգ N 1՝ 60-65 տարեկան կին, գանգ N 4՝ 50-59 տարեկան տղամարդ) եւ ատամնաբնային թարախակույտ (գանգ N 2՝ 40-49, գանգ N 4՝ 50-59 տարեկան տղամարդ): Ախտահարումը վերաբերում է բացառապես առաջին եւ երկրորդ՝ հիմնական ծամող ատամներին: Արծնածակի հիպոպլազիա (enamel hypoplasia. գանգ N 2՝ 40-49, գանգ N 3՝ 18-22, գանգ N 4՝ 50-59 տարեկան տղամարդ), ատամնաքար (գանգ N 1՝ 60-65 տարեկան կին, գանգ N 2՝ 40-49, գանգ N 4՝ 50-59 տարեկան տղամարդ) եւ մինչ մահը զրկված ատամներ (գանգ N 1՝ 60-65 տարեկան կին, գանգ N 2՝ 40-49, գանգ N 4՝ 50-59 տարեկան տղամարդ) են հանդիպում երեք անձի մոտ: Այնպիսի հատկանիշների առկայությունը, ինչպիսիք են՝ cribra orbitalia, արծնածակի հիպոպլազիան եւ այլն, վկայում են, որ այստեղ օրգանիզմը ենթարկվել է արտաքին տեւական ազդեցությունների»:

Վանքը ունեցել է հյուրատուն, առաջնորդարան, գրադարան, դպրատուն եւ տնտեսական շինություններ, որոնք այսօր ավերված են: Պահպանված ավերակները, ամենայն հավանականությամբ, վերաբերում են Զաքարիա Սարկավագի ժամանակներին:

Զաքարիա Սարկավագը եւ Երվանդ Շահազիզը վկայում են, որ վանքն ունեցել է նշանավոր դպրոց՝ բարձրակարգ բաբունապետներով եւ ուսուցիչներով: Զաքարիա Սարկավագը գրում է. «Նա հավաքեց շատ գրքեր, ընդունեց բազմաթիվ աշակերտներ, որոնց հետ էի եւ ես՝ խեղճ Զաքարիաս: Հաստատեց նաեւ դպրատներ եւ իմ նվաստությանը նշանակեց մանուկների ուսուցիչ: Բերեց Զուղայեցի Սիմեոն վարդապետին, որը մեզ սովորեցրեց փիլիսոփայական ուսմունքը: Իսկ լվովցի Նիկողայոս վարդապետին բերեց, որ մեզ երաժշտություն սովորեցնի...»[41]:

[41] **Զաքարիա Քանաքեռցի,** Պատմագրութիւն, էջ 236:

Երվանդ Շահազիզը հավելում է. «ԺԷ.-ԺԸ. դդ. ինչպես Արարատյան աշխարհի մյուս բնակավայրերի, այնպես էլ Աշտարակի ուսումնածարավ պատանիներն ուղարկվում էին սկզբներում Հովհաննավանքի դպրոցը, իսկ վերջերում՝ ընդհուպ մինչեւ ԺԹ. դարու 20-30-ական թվականները՝ Էջմիածին...»[42]:

Վանքի դատարկման եւ գյուղի լքման հետ պետք է կապել դպրոցի տեղափոխումը Ս. Էջմիածին:

Ե. Շահազիզը վկայում է, որ ԺԹ. դարի առաջին կեսին Հովհաննավանք գյուղում ապրում էին միայն թաթարներ՝ քսան ծուխ: Այստեղ էր եւ Իսմայիլ խանի կալվածքը[43]:

Գտածոներ. Մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերված խեցեղենն արժեքային առումով պարզունակ է՝ համեստ հարդարանքով: Այն բաղկացած է անջնարակ, ջնարակապատ եւ հախճապակե անոթների բեկորներից: Անջնարակ խեցեղենը, գործառական բնույթով, առտնի գործածության-խոհանոցային անջնարակ տարաբնույթ անոթների բեկորներ են՝ հատակներ, իրանի մասեր, ժապավենաձեւ բռնակ-կանթեր եւ այլն: Բռնակ-կանթերի խմբում եզակի են կլոր կտրվածքով բռնակները, որոնք մեծ մասամբ կրել են կճուճներն ու սափորները:

Կարասների բեկորները հայտնաբերվել են որոշակի խմբերով: Դրանք զանգվածեղ են, ունեն դեպի դուրս թեքվող բոլորշի շուրթ՝ լայն պսակով, պարանոցներին մատնեքազարդ, ներճկված կամ ելունդազարդ գոտիներ:

Առանձնակի ուշադրության են արժանի թանձր խեցի ունեցող կարասների բեկորները, հատկապես՝ իրանների. դրանցից մեկի դաշտը հարդարում է ուռուցիկ կիսաեռանկյունաձեւ ելունդազարդը, իսկ մյուսինը՝ ուռուցիկ կիսաբոլոր գալարազարդը:

Հայտնաբերված փոքր չափերի անզարդ խուփերը, հավանաբար, ծածկել են առօրյա գործածության ոչ խոշոր կճուճները: Կան եւ թասերի վերնամասեր, որոնք ունեն ուղիղ կտրվածքով, երբեմն ուռուցիկ, մրճաձեւ հատվածքով շրթնամասեր (աղ. 11):

Խեցեղենի այս ընդհանուր պատկերը վկայություն է Հայաստանի ուշ միջնադարի արհեստագործության անկումային վիճակի՝ պայմանավորված երկրի ներքին ու արտաքին մի շարք գործոններով, որի արդյունքում տիրապետող էր դառնում տնայնագործությունը: Կենցաղում

---

[42] Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 271:
[43] Անդ, էջ 296:

գործածվում էր առավելապես էժանագին սպասք՝ հաճախ պատրաստված տնայնագործ բրուտների կողմից: Նույնը նկատելի է նաեւ Հովհաննավանքի պարագայում: Միաբանների ճգնակեցության թելադրանքն էր անշուք ու համեստ կենցաղավարումը:

Ջնարակած խեցեղեն. *Համալիրի տարածքում հայտնաբերված ջնարակած եւ հախճապակե անոթների բեկորները մեծ մասամբ ԺԷ. դարի խեցեգործությանը բնորոշ գուներանգներով ու պատրաստման հնարներով են:*

Տեղական մշակման՝ ԺԲ.-ԺԳ. դարերի բեկորները սակավաթիվ են, միագույն, պարզունակ, երբեմն հարդարված գծազարդերով: Ամենաուշագրավը երկարավիզ չշաՀեւ անոթի իրանի բեկորներն են՝ պատված ձիթապտղի կանաչ երանգի ջնարակով: Պահպանված բեկորներից կարելի է ենթադրել, որ եռաշերտ, իրարահաջորդ ուռուցիկ գոտիներով ձեւավորված անոթի շուրթը փակվել է պտուտակավոր կափարիչով: Անոթի կանթը լայն է ու տափակ: Ընդգծված երկարավուն պարանոցից իրան իջնող մի փոքր լայնացած հատվածը հարդարում է վերադիր, մինչ թրծումը ամրացված տղամարդու դիմապատկերը: Տղամարդը տարեց է, ճաղատ, խոշոր լայն բացած աչքերով, թավ մորուքով: Կարելի է ենթադրել, որ այն պատկերն է բարձրաստիճան հոգեւորականի, վանքի հոգեւոր առաջնորդի կամ հովանավոր որեւէ իշխանի: Դիմապատկերը կրում է ԺԶ.-ԺԷ. դարերի արվեստին բնորոշ տարրեր՝ գծազարդ մորուք, լայն բացած խոշոր աչքեր, քիչ երկարավուն գեղեցիկ դեմք: Անոթը առայժմ իր դիմապատկերային հորինվածքով եզակի է խեցեղեն գտածոների մեր հավաքածուներում (աղ. 10, նկ. 1):

Ջնարակած խեցանոթների համեստ խումբը ենթաջնարակային եղանակով մշակված թասերի, պնակների բեկորներ են՝ գերազանցապես իրանական խեցեգործական կենտրոնների արտադրանք (աղ. 10, նկ. 2). օգտագործվել են իբրեւ միաբանության բարձրաստիճան հոգեւորականության սեղանի սպասք: ԺԵ.-ԺԷ. դարերում վանական համալիրների սպասավորները երբեմն օգտագործում էին ներմուծված իրանական եւ չինական սպասք, անոթներ (օրինակ՝ Գնդեվանքի հորերից մեկում հայտնաբերված ճենապակե հավաքածուն)[44]*:*

Ներմուծված խեցեղեն հավաքածուի առկայությունը պատահական չէ: 1603 թ. իրանա-թուրքական պատերազմի ժամանակ, երբ Թուրքիա-

[44] **Ա. Ժամկոչյան, Ա. Մեշինյան**, Չինական ճենապակու նմուշներ Գնդեվանքից, ՊԲՀ, թ. 1-2, 1996, էջ 382-385:

յում ծավալվում էր նաեւ Ջալալիների շարժումը, Հայաստանում այն ունեցավ ուղղակի ազդեցություն: Ջալալի թուրքերի որոշ խմբեր թափանցեցին Հայաստան եւ դաժան կողոպուտի ենթարկեցին պատերազմներից հոգնած եւ դատարկված Արարատյան երկիրը:

Առաքել Դավրիժեցին մեծագույն ցավով արձանագրում է, որ Օսման փաշան, հաստատվելով Կարբիում, կողոպուտի ենթարկեց շրջակա գյուղերը: Նրա ջոկատներից մեկը՝ Ավբդուռրզման Մուսալիմի առաջնորդությամբ, կազմակերպում է Հովհաննավանքի թալանը, երբ հափշտակվում են եկեղեցական գույքը, արժեքավոր շատ գրչագրեր[45]*:*

Բացառված չէ, որ ԺԷ. դարում հարդի համարվող ջնարակած եւ հախճապակե սպասքը կողոպտվել է այդ ավազակախմբերի կողմից, այսօր պահպանված փոքրաթիվ բեկորների հայտնաբերումը կարող է հոգեւոր դասի՝ հյուրընկալության-հյուրասիրության նպատակին ծառայող սեղանի սպասքին վերաբերել, քանզի մենաստանի ճգնավորներն ու դպրեվանքի աշակերտներն ապրել են համեստ կենցաղով:

Տեղում գտնված՝ արաբատառ արձանագրությամբ մարմարե մշակված բեկորը եւս վերաբերում է այդ ժամանակներին. այն կարելի է շիրմաքարի բեկոր համարել:

Գտածոներից ուշադրավ է նաեւ որձաքարե սանդը՝ բազիլիկի հյուսիսային պատի տարածքից՝ հնձանահորերի հարեւանությամբ:

Սանդը միջին չափերի է եւ օգտագործվել է հացահատիկ ծեծելու, թեփահան անելու նպատակով: Նման սանդերը մինչեւ վերջին ժամանակները գործածվում էին Արագածոտնի գրեթե բոլոր շրջանների գյուղաբնակների կողմից:

Իբրեւ վերջաբան, կարծում ենք, կարելի է հավելել, որ Հովհաննավանքի պեղումների շարունակականությունը անհրաժեշտություն է:

РЕЗЮМЕ

С 18-ого июля до 18-ое августа 2015 г. были проведены очистительные работы на западной стороне огражденной стены монастыря Ованнаванк. При очистке строительного мусора и реставрационных работ у центрального входа, открылась сторожная комната, с каменными лестницами и смежными (или прилегающими) кельями. В центре сторожной комнаты сохранился маленький очаг. Кели на стенах имели ниши различных видов и размеров, камин был расположен на запад-

[45] **Լ. Դանեղյան**, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դ. պատմության սկզբնաղբյուր, Երեւան, 1978, էջ 122:

ной стене кельни. Очистительные работы были также осуществлены на северной стороне базиличного собора V века. При раскопках открылись винодельные давильные ямы, погребения с человеческими останками. Обнаруженные фрагменты глазурованной и неглазурованной керамики датированы XIII-XVII вв.

SUMMARY

From July 18 to August 18, 2015 cleaning excavations were realized towards the west wall surrounding the monastery. The main aim was to remove the building rubble. During the regular works ruins of a watch-tower and a chamber of different sizes of niches as well as fire-place were uncovered. A stone axis at the edge of the east wall of the chamber testified the presence of a door. Adjacent to the North wall of the 5th century basilica church several wine-presses and wells were discovered together with burials with human rest. The fragments of glazed and unglazed ceramics date to the 13-17th centuries.

Նկ. 1

Նկ. 2

Աղ. 10. Գտածոներ տարաբնույթ առարկաների՝ կավե, ջնարակապատ եւ անջնարակ (ԺԲ.-ԺԳ., ԺԵ.-ԺԷ. դդ)։

Աղ. 11. Խեցանոթների տարբեր բեկորներ՝ նստուկներ, ունկեր, շուրթեր եւ իրանի հատվածներ։